

Ծ Ր Ը Գ Ի Ր

ՀԱՅ ՆՈՐ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ

(Պետական ​​​​ֆնդաբաշխման համար)

19 յեզ 20-րդ դարեր



ՈՒՍՈՒՑԻՋՆԵՐԻ ՎՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՆԻԱՏԻՏՈՒՑԻ ՀՐԱՏԱՐԱԿԱՎՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ

1938

13 APR 2011

ՀԽՍՀ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

891.99.09

Ծ-98 Այ.

Ծ Ր Ը Գ Ի Ր

ՀԱՅ ՆՈՐ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ

(Պետական ֆնանսավարկության համար)

19 յեվ 20-րդ դարեր

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՀՐԱՏԱՐԱԿՁՈՒԹՅՈՒՆ

Ց Ե Ր Ե Վ Ա Ն

1938

15 MAY 2013

Ձեռնարկի ԻՐԱՎՈՒՆԻՏՈՎ

Թույլատրվում է ոգտագործելու, վոր-
պես նախագիծ Հայկ. ԽՍՀ-ի Լուսժողկո-
մատի Բուհերի Վարչության կողմից:

Ծ Ր Ա Գ Ի Ր

ՀԱՅ ՆՈՐ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ

(Պետական քննությունների համար)

19 և 20-րդ դարեր

1. ԽԱՂԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆ

Կենսագրական պատմական տեղեկություններ:

Աբովյանը վորպես հայ նոր գրականության սկզբնավորող-
աշխարհաբար վեպի հիմնադիր: Աբովյանի ստեղծագործություն-
ները: «Վերք Հայաստանի» վեպը իբրև խոշոր գրական յերևույթ
(առաջին, յիվրոպական գրականության մեջ զարգացած ձևով,
ռոմանը):

Պայքար գրաբարի դեմ: Նրա ստեղծագործության մեջ ժողո-
վրդական տարրը:

Աբովյանի աշխարհայացքի հիմնական գծերը:

Աբովյանը վորպես նոր դոլրոցի և մանկավարժության ռա-
վիրա: «Վերք Հայաստանի» վեպի գեղարվեստական առանձնա-
հատկությունները, ուժեղ պատկերավորության վորոշ սկզբունքի
համաձայն հետևողական կոմպոզիցիա, հակադրություններ, եպի-
քական չափազանցություններ, տեղական կոլորիտ, մի շարք
դեպքերի և տեսարանների դինամիկ նկարագրությունը և այլն:

Վեպի գեղարվեստական թերությունները, հաճախակի կողմ-
նակի շեղումներ, Աղասու բնավորության անհետևանքական պատ-
կերացում, դերի անհամաչափ բաշխում և նաև առհասարակ այն-



2340
38

Պատ. խմբ. Մ. ՄԿՐՅԱՆ
Սրբազրիչ՝ Կ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

Գլավլիտի լիազոր Տ.—9562 Պատվեր № 112, Տիրաժ 1500
Հանձնված է արտագրության 17 ապրիլի 1938 թ.
Ստորագրված է տպելու 5 մայիսի 1938 թ.

Ուսուցիչ. Վորակավորման Ինստիտուտի տպարան, Մարքսի փ. № 17 Յերևան

պիսի թերութիւններ, վորոնք պայմանավորուած են Արովյանի գրական ուղութեամբ՝ ռոմանտիզմով:

Արովյանի կրած ազդեցութիւնները յեկրոպտական գրականութեանից (Հերգեր, Ռուսսո և այլն):

Արովյանի մյուս գրվածքները («Պարապ վախտի խաղալիք», «Ուսման», «Թուրքի աղջիկ» և այլն) և նրանց արժեքը:

Աղբյուրներ.—«Վերք Հայաստանի», «Անտիպ յերկեր», («Թուրքի աղջիկ»):

2. ՄԻՔԱՅԵԼ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

Կենսագրական պատմական տեղեկութիւններ:

Նալբանդյանը վորպես հրապարակախոս, բանաստեղծ և քննադատ: Նալբանդյանի հրապարակախոսութեան յերկու շրջանների մասին: Նալբանդյանը վորպես «Հյուսիսափայլ»-ի աշխատակից, «Հիշատակարաններ» և «Մեծեղահարցուկ» վեպը: Նալբանդյանի վորոշ հայացքների պաշտպանութիւնը «պահպանողականների» դեմ:

Այս շրջանում՝ Նալբանդյանի եյական մի շարք տեսակետների տարբերութիւնը Նալբանդյանից (Ֆրանս, հեղափոխութեան և լուսավորիչների նկատմամբ, ցարիզմի, ազգութեան գաղափարի ըմբռնման նկատմամբ և այլն): Նույն տարբերութիւնների արտահայտութիւնը բանաստեղծութիւնների մէջ: Նալբանդյանը իրրե քաղաքական պոեզիայի տաղանդավոր ներկայացուցիչ: Նալբանդյանի և Նալբանդյանի հարաբերութիւնների խզման դասակարգային արմատը—Նալբանդյանը վորպես հայ դեմոկրատիայի հեղափոխական գաղափարախոս. «Յերկու տող» և «Յերկուազորութիւնը վորպես ուղիղ ճանապարհ» աշխատութիւնները՝ հոգային հարցի հեղափոխական ուղիով լուծման առաջարկ. ազգային խնդրում դեմոկրատական տեսակետի պաշտպանում. ֆեոդալականութեան, բուրժուական իրականութեան և ցարիզմի խիստ քննադատութիւն:

Նալբանդյանի կրած ազդեցութիւնները ուս. հեղափոխական մտքից (Գերցեն, Ոգարե, Բակունին, Չերնիշևսկի):

Ֆեյերբախի մատերիալիզմից կրած ազդեցութիւնը: «Յերկ-

րազորութիւնը վորպես ուղիղ ճանապարհ»-ի տեսակետի ուսման պիկ բնութեւր:

Նալբանդյանի իրրե քննադատ: Ռեալիստական վեպի սկզբունքի արծածումը «Սոս և Վարդիթեր»-ի մասին գրած կրիտիկայում: Նալբանդյանի թողած ազդեցութիւնը հետագայի մի շարք գրողների վրա:

Նալբանդյանի փայլուն վոճը:

Աղբյուրներ.—«Յերկու տող», «Յերկուազորութիւնը վորպես ուղիղ ճանապարհ», «Բանաստեղծութիւններ»:

3. ՌԱՔԱՅԵԼ ՊԱՏԿԱՆՅԱՆ

Պատկանյանը վորպես ռոմանտիկ ազգայնական բանաստեղծ: Պատկանյանի և Նալբանդյանի հակամարտութիւնը գրական և հասարակական գործունեութեան մէջ: Պատկանյանի բանաստեղծութիւնների հիմնական մոտիվները—մարտական ազգայնականութիւն («Հայկական հարցի» արծարծման շրջանում), հարուստների ժլատութեան, հոգևորականների տգիտութեան, հայերի ոտարածութեան յերկուցիների քննադատութիւնը:

Պատկանյանի իրրե յերգիծաբան («Նոր Նախիջևանցոց քրնարը»): այս բնագավառում նրա վորոշ տաղանդը (նույն և նրկատի առնելով նոր Նախիջևանի բարբառով յերգիծաբանական արծակը):

Ընդհանրապես Պատկանյանի բանաստեղծութիւնների թույլ տեսնիկան ու ձևական վորրինականութիւնը: Պատկանյանի իրրե մանկական բանաստեղծ (այս բաժնում նույնպես ցույց և տվել վորոշ տաղանդ):

Պատկանյանի իրրե արծակագիր, նրա վեպերն ու պատմեվածքները. բուրժուական նոր կադրերի պատրաստման թիման այս գրվածքներում: Վեպերի և պատմեվածքների ժանրային առանձնահատկութիւնները: Նալբանդյանի և Արծրունու հրապարակախոսութեան ազդեցութիւնը Պատկանյանի վրա: Պատկանյանի ազդեցութիւնը մի քանի գրողների վրա (Ռաֆֆի, մասամբ Հովհաննիսյան և այլն):

Աղբյուրներ.—«Նոր Նախիջևանցոց քնարը», «Փորսուզին Ավազը», «Փառասեր»:

4. ՍՄԲԱՏ ՇԱՀԱԶԻԶ

Շահազիզի աշխարհայացքը, Նազարյանի հրապարակախոսությունը և Շահազիզի ստեղծագործությունների բովանդակության նմանություններն ու տարբերությունները. Շահազիզը վորպես քաղաքական մտածիվների յերգիչ: Վաճառականություն, կղերականություն և բռնակալության քննադատություն, աղղայնական դաստիարակության պահանջ և այլն:

«Լեոնի վիշտը» պոեմը.—Շահազիզի բարոյականության հարցը: Բայրոնի պոեմների ձևի և մասամբ բովանդակության ոգտագործումը Շահազիզի կողմից. «Լեոնի վիշտը» ժանրական նորություն (լիրիկան—պոեմ) մեր գրականության մեջ. Լեոնն իբրև 60-ական թվականների լիբերալ-բուրժուական հայ ինտելիգենցիայի քաղաքական և հասարակական գաղափարների սնձնավորող:

Շահազիզի սիրային բանաստեղծությունները վորպես նորություններ հայ գրականության մեջ: Շահազիզը վորպես մեր գրական լեզվի զարգացման մեջ աչքի ընկնող դեր կատարող բանաստեղծ: Շահազիզն իբրև հրապարակախոս:

Աղբյուրներ.—«Լեոնի վիշտը» և «Բանաստեղծություններ»:

5. ՊԵՐՋ ՊՈՒՇՅԱՆ

Կենսագրական տեղեկություններ. Պոռոջյանը վորպես սոցիալական վեպի սկզբնավորող հայ գրականության մեջ: 60—80-ական թվականների հայ գյուղի սոցիալական կյանքի արտացոլումը նրա վեպերի մեջ: («Հացի խնդիր», «Ցեցեր», «Բղդե», «Հունոն»:

Պոռոջյանը վորպես գյուղացիական աշխատավորական մասսաների գաղափարախոս: Կուլակության, հողավորականության վորոշ ներկայացուցիչների և ցարական չինովնիկության ստորարարքների մերկացումը: Պոռոջյանի Ռեալիզմը: Պոռոջյանի վեպերի

գեղարվեստական արժեքը, գյուղական իրականությունից հարուստ պատկեր, ցեցերի հաջող գծված դեմքեր (Միկիտան Սաքոն, Բալասան աղան, Բղդե և այլն):

Ժողովրդական բանահյուսությունից լայն ոգտագործում, տեղական վառ կոլորիտի ստեղծում:

Պոռոջյանի վեպերի գեղարվեստական թերությունները—հանգուցյների պատահական լուծում, կին հերոսների (Հեղնար, Սոնա, Հերիքնազ և այլն) բնավորության թերի պատկերում, կողմնակի շեղումներ և այլն:

Պոռոջյանի ազգայնական գաղափարախոսությունից ազդեցության տակ ընկնելու կարճատև շրջանը, այդ ազդեցության արտահայտությունը հանդիսացող «Շահին», «Միկիզն յերկանց» վեպերի գեղարվեստական ծայրահեղ թուլությունը: Ազգայնական գաղափարախոսությունից վերացումը «Հունոն» վեպում. դեմոկրատիկ ապստամբական տրամագրություններն այս վեպում: Պոռոջյանի թողած ազդեցությունը հետագա գրողների վրա:

Աղբյուրներ.—«Հացի խնդիր», «Ցեցեր»:

6. ՂԱԶԱՐՈՍ ԱՂԱՅԱՆ

Կենսագրական տեղեկություններ: Աղայանի ստեղծագործության բաղմամբությունը: Աղայանն իբրև լիրիկ բանաստեղծ: Այս բաժնում համեմատաբար մանկական բանաստեղծությունների ուժեղ լինելը, սրանց մանկավարժական և գեղարվեստական արժեքը:

Աղայանն իբրև վիպաստ. «Արություն և Մանվել». Աղայանի կարծիքները իր այս վեպի մասի: Արությունից կրած ազդեցության առկայություն այս վեպում՝ հակառակ հեղինակի պնդումների: «Հյուսիսափայլ» ուղղությունից կրած ազդեցությունը: «Յերկու քույր» վեպը վորպես Աղայանի լավագույն գործերից մեկը. «Յերկու քույր» վորպես առաջին աչքի ընկնող մաքուր պրական լեզվով գրած վեպը մեր գրականության մեջ:

Հայ գյուղի հասարակական հարաբերությունների արտապոլումը. վեպի հերոսները՝ Թաթոս և Արզուման. Թաթոսն իբրև գյուղական կուլակ, Արզումանն իբրև ապստամբ. Աղայանի ա-

պըստաժրական տրամագրություններ ի արտահայտությունը նաև «Բյուռզի» հեքիաթում:

Աղայանի իբրև հեքիաթագիր, ժողովրդական հեքիաթների մշակման մեթոդը: Աղայանի սոցիալական ուստպիան: Արդար բաժանության տեսակետը («Բաժանություն»), այստեղից ժամանակակից «Ատենախոսություն» վերնագրով ուստպիայի ծագումն ու ելությունը:

Նալբանդյանից կրած ազդեցությունը: Աղայանի ազդեցությունը հայ հետագա գրողների վրա:

Աղբյուրներ. — «Բանաստեղծություններ», «Յերկու բույր», «Հեքիաթներ», «Իմ կյանքի գլխավոր զեպքերը»:

7. ԳԱՐԻԻԵԼ ՍՈՒՆԴՈՒԿՅԱՆ

Սուեդուկյանի իբրև դրամատուրգ: Սուեդուկյանի նախորդները մեր գրականության մեջ: Պատմական վոդեբեզություններ և կենցաղական վոդվիլները:

70—90-ական թվականների հայ առևտրական բուրժուազիան և նրա կյանքի ու կենցաղի արտացոլումը Սուեդուկյանի դրամատուրգիայի մեջ: Սուեդուկյանի ուսուցիչը և այդ ուսուցիչի մերկացնող նշանակությունը. («Սաթարալա», «Պեպո» և այլն պիեսներում հանդես բերված ստոր միջոցներով հարստացող վաճառու առևտրականների քննադատությունը. — Զամբախով, Զիմզիմով, սրանց տիպերի վերլուծությունը), Բուրժուական քայքայվող ընտանիքի պատկերը Սուեդուկյանի վերջին գրվածքներում — «Ամուսիններ», «Սեր և ազատություն»):

Ապահարզանի խնդիրը և այդ խնդրի լուծման անդորությունը Սուեդուկյանի մոտ: Սուեդուկյանի ստեղծած բեմական արվեստի առանձնահատկությունները: Ընդհանրապես Սուեդուկյանի կոմեդիաները իրենց ժանրական տիպով՝ Ա. Ոստրովսկու պիեսներին նման լինելը: Սուեդուկյանի ստեղծագործության գեղարվեստական արժանիքները՝ աշխուժ մոնոլոգներ և դիալոգներ,

հերոսների վարպետ եքսպոզիցիան և խարակտերիստիկա, հաջող կառուցված ինտրիգներ, գործողության ուժ և միասնություն: Կենցաղային նուրբ դիտողություններ, կյանքի կենտրոնի հաջող ոգտագործում և այլն: Թերություններ — թեմայի և սյուժետի կրկնություններ, յերբեմն գործողության զգալի պակաս և այլն: Սուեդուկյանի իբրև յերգիծաբան արձակագիր:

Սուեդուկյանի պիեսները խորհրդային բեմերի վրա:

Աղբյուրներ. — «Սաթարալա», «Պեպո», «Բանդած ոջախ», «Ամուսիններ»:

8. ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Արծրունին վորպես 70—90-ական թվականների հայ արդյունաբերական բուրժուազիայի հրապարակախոս: Արծրունին վորպես Նաղարչյանի հայացքների շարունակող: Արծրունու հրապարակախոսության շոշափած գլխավոր խնդիրները մինչ «Մշակ»-ի հրատարակությունը. — կանանց դերի մասին, աշխատանքային զբաղմունքի լիզվի պաշտպանություն, բնական գիտությունների արժեքավորություն, քարոզ առևտրից արդյունաբերության անցնելու շահավետության մասին, գեղարվեստական գրականության արժեքի մասին և այլն: Կոնտի պոպուլյարիստական փրիլիսոփայության ուժեղ ազդեցությունը Արծրունու վրա: Նաև Պիսարեվի ազդեցությունը: «Մշակ»-ի հրատարակությունը:

1879-ական թվականների ուսուցիչական պատերազմը, Արծրունին «Հայկական հարցի» ամենատիպի հրահրողներից մեկը: Ցարական նվաճողական քաղաքականության հետևողական պաշտպանությունը Արծրունու կողմից:

Արծրունու ուսուցիչական թեորիան — նրա թրքատեցությունը և քրդատեցությունը: Մարտական նացիոնալիզմի հիմնավորումը ռասսայական թեորիայով: «Մշակի» և «Պահպանողական» թերթերի միջև յեղած բանակռիվը «Հայկական հարցի» շուրջը:

Արծրունին իբրև վիպասան, ֆելետոնիստ և բնագետ (Ասիացի, Նիոբե): Արծրունու լեզվի և վոճի առանձնահատկությունները:

Արծրունու ազդեցությունը Բաֆֆրի և մասամբ Շիրվանզադեյի վրա:

Աղբյուրներ. — «Յերկերի ժողովածու» 1-ին հատոր:

Կենսագրական տեղեկություններ: Բաֆֆիի ստեղծագործությունն հետապնդելը, «Հյուսիսամերիկայի» շրջան («Աղթամարա վանքը» և այլն): Բաֆֆիի առաջին շրջանի գործերը՝ «Սալբի», հենց այս գրվածքում իսկ գծագրվող Բաֆֆիի բուրժուական ազգայնական գաղափարախոսությունը:

Բուրժուազիայի հետամնաց խավերի քննադատությունը Բաֆֆիի մի շարք գրվածքներում հատկապես «Զարհուսմար» և «Վոսկի աքաղաղ» վեպերում: Ճանճուր Իվանիչը և Մասիսյանի տիպերը, ռեալիզմի տարրերը հիշյալ վեպերում և նրանց գեղարվեստական արժեքը:

«Մշակի» շրջան, «Հայկական հարց», Բաֆֆին իբրեւ ռեալիզմի նախնական շրջանի արտահայտիչ: Արժույթը հրապարակախոսություն և Բաֆֆիի վիպասանություն կապն այս շրջանում («Զալալի», «Խենթ», «Կայծեր»), ազգայնություն հիմնավորումը գոյություն կուլի և ռասայականություն թեորիաներով: Բաֆֆիի ռոմանի թեորիան և պրակտիկան. տեղեկացիոց «ծրագրային» ռոման:

Ռոմանտիզմը վորպես Բաֆֆիի դրական հիմնական ուղղություն:

Բաֆֆին իբրեւ պատմաբան և պատմավիպասան: Նրա իդեալիզմը և ինդիվիդուալիզմը—«Սամուել»—այս պատմական վեպը վորպես Բաֆֆիի վիպասանական տեխնիկայի նվաճումը: Բաֆֆիի վիպասանական ընդհանուր արժեքները՝ արկածային վեպի ժանրի հաջող ոգտագործում, լեզվի կանոնավորություն, վառ և խտացած գույներ, մի քանի գրական տիպերի ժողովրդականացումը (որ. Տեր Թեոդիկ, Քավոր Պետրոս, Մասիսյան):

Բաֆֆիի ստեղծագործությունների ընդհանուր թերությունները—հերոսների միատեսակություն, բնավորության սխեմատիկ միակողմանի պատկերացում, վիպասանական պրոնիմների կրկնություն, հրաշապատում անցքեր և այլն:

Բաֆֆիի կրած ազդեցությունները յեվրոպական ռոմանտիկ գրականությունից (Սկոտ, Հյուգո): Բաֆֆիի թողած ազդեցությունը հայ մի քանի գրողների վրա:

Աղբյուրներ.—«Վոսկի աքաղաղ», «Սամուել»:

Կենսագրական տեղեկություններ: Շիրվանզադեն վորպես ռեալիստական վիպասան և դրամատուրգ: Գավառական հետամնաց կյանքի քննադատությունը Շիրվանզադեյի սկզբնական գրվածքներում («Նամուս», «Ցավազար»): Բուրժուական ընտանիքի և ինտելիգենցիայի թեման Շիրվանզադեյի հետագա գրվածքներում:

Բուրժուական ընտանիքի քայքայման և ալյասերման պատկերը Շիրվանզադեյի յերկերում.—Շիրվանզադեյի ռեալիզմի քննադատական բնույթը: Ընտանիքը քայքայումից փրկելու յեղբայրանկու անգործությունը: Շիրվանզադեյի ռեալիզմի անհետեղականությունը: Բուրժուական հասարակություն ինտելիգենցիայի կյանքի պատկերը Շիրվանզադեյի գրվածքներում («Արտիստ», «Նորերից մեկը», «Արամբին», և այլն):

1905 թվի հեղափոխությունից հետո ռեալիզմի շրջանի ազդեցությունը Շիրվանզադեյի աշխարհայացքի վրա («Կործանվածը», և այլն):

Շիրվանզադեյի մեծ գեղը մեր վիպագրություն և դրամատուրգիայի զարգացման պատմություն մեջ: «Քառու» «Պատվի համար» և այլն:

Շիրվանզադեն և խորհրդային իրականությունը, նրա՝ Հայաստանի խորհրդայնացումից հետո գրած աշխատությունները («Մորզանի խնամին»): Շիրվանզադեյի կրած ազդեցությունները ռուս. և չարեմտայնավորական կլասիկ ռեալիստական գրականությունից (Բալզակից, Տոլստոյից, Զոլայից):

Շիրվանզադեյի գործերը խորհրդային բեմերի վրա և կինոմատոգրաֆիայի մեջ:

Աղբյուրներ.—«Նամուս», «Քառու», «Արտիստ», «Պատվի համար»:

11. ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՑՕ-ական թվականների դուղի քայքայման արձագանքը Հովհաննիսյանի ստեղծագործության մեջ (որ. «Գյուղի ժամը»):

Վաշխառությունը վորպես հասարակական չարիք, հեղինակի պատիվ բողոքը կապիտալիզմի դեմ: Հեղինակի զեմոկրատիզմը: Բարեգործության և բարության քարոզ: Այդ բոլոր միջոցների անբավարարության գիտակցություն, հասարակության արժամադրության ներանձնացումը («Ախ տվեք ինձ մի քաղցր քուն»): Հովհաննիսյանը իբրև սիրո, վայելքի և պատմական անցյալի յերգիչ, կիրքերալիզմի արտահայտություններ նրա աշխարհայացքի մեջ: Հովհաննիսյանն իբրև բանաստեղծական բարձր կուլտուրայի ներկայացուցիչ (Վ. Բրյուսովի կարծիքը). նրա տաղաչափության տարբերությունն իր նախորդներից (Գամառ-Քաթիպայից, Շահազիզից և այլն) և նրա հոգատարությունը լեզվի և վոճի պատկերավորության մեջ: Ժողովրդական բանաստեղծության ողտադործումը: Հովհաննիսյանի ստեղծագործության զեղարվեստական թերությունները: Հովհաննիսյանն իբրև հմուտ թարգմանիչ: Պուշկինից կրած ազդեցության խնդիրը և Հովհաննիսյանի խոստովանությունն այդ առթիվ:

Ա. Ղ. Բ. Ե. Ե. Ե. Ե. Ե. — «Բանաստեղծություններ»:

12. ԱԼԵԿՍԱՆԴՐ ԿԱՏՈՒՐՅԱՆ

Ծառուրյանը իբրև 90-ական թվականների հայ զեմոկրատիայի արամադրությունների յերգիչ: Ծառուրյանի ստեղծագործության մեջ արդար վաստակի և աշխատավորի դոկերդումը և, «Մեծատունների» դեմ յելույթները:

Ծառուրյանի խորը դժգոհությունը ցարական կարգերից և դրա արտացոլումը նաև սիրո ու բնության յերգերի մեջ: Յերգիծանքի զենքը «Գրչի հանաքներ»-ի մեջ և ներբողի ժանրը: Ծառուրյանը բանացրել է նաև լիրիկական բանաստեղծության այլ ժանրեր (որ. ելեգիա և այլն):

Յերգիծական գործերի հիմնական թեմաներն են բուրժուական ինտելիգենցիայի խոսքի և գործի հակասությունը—հայ հեղինակի տնտեսական վատթար վիճակը, հոգևորականների տգիտությունը և այլն: Ծառուրյանի բանաստեղծությունների զեղարվեստական արժիքը: Լեզվի և վոճի, վոտանավորի կառուցվածքի

պարզություն, մտքերի և զգացմունքների անկեղծություն և անմիջականություն: Ծառուրյանն իբրև թարգմանիչ: Պուշկինի, Լերմոնտովի և Նեկրասովի չափածո գործերի և Տուրգենևի արձակ բանաստեղծությունների՝ հայացման փորձի առավելություններն ու թերությունները:

Ա. Ղ. Բ. Ե. Ե. Ե. Ե. — «Բանաստեղծություններ»:

13. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆ

Կենսագրական տեղեկություններ: Թումանյանը վորպես հայ պոեզիայի խոշորագույն դեմք: Թումանյանի ստեղծագործության հանճարեղության ցուցանիշները: Եպիխայի ամբողջական և խորն արտացոլումը կոնկրետ պատկերների մեջ. ընդհանրացում կատարելու մեծ ընդունակություն, ձևի պարզություն, կատարելություն և բովանդակության խորություն, բանաստեղծական չափի զգացմունք, ստեղծագործության ժողովրդայնություն և սերտ կապ ժողովրդական բանահյուսության հետ: Թումանյանի ստեղծագործության բաղաժանրությունը— Թումանյանը վորպես լիրիկ և վորպես եպիկ: Թումանյանը վորպես լիրիկական, եպիկական գրվածքների և արձակ նովելայի մեծ վարպետ: Թումանյանի խիստ քննադատական վերաբերմունքը դեպի բուրժուական իրականությունը: («Պոեան ու Մուսան», «Գիքոր», «Ճամբորդություն Լոռիում») և հումորական քննադատական վերաբերմունքը դեպի գյուղական հետամընացությունը:

Այստեղից Թումանյանի աշխարհայացքի պրոգրեսիվ բնույթը: Թումանյանը վորպես հեքիաթագիր, ժողովրդական հեքիաթներ մշակելիս՝ ժողովրդի վոգուն հարազատ մնալը («Քաջ Նաղար», «Տերն ու ծառան»): Թումանյանի ոեանլիզմը:

Թումանյանն իբրև մանկական գրող: Թումանյանն իբրև հրապարակախոս և ֆելետոնիստ:

Թուժանյանը և խորհրդային իրականությունը: Թուժանյանի կրած ազդեցությունները: Շահուժանի վերաբերմունքը դեպի Թուժանյանի ստեղծագործությունը:

Աղբյուրներ.—«Գեղարվեստական յերգեր»:

14. ՄՈՒՐԱՑԱՆ

Կենսագրական տեղեկություններ: Մուրացան և «Նոր դար» թերթը: Մուրացանը վորպես նոր-դարական: «Նոր դար» և ժամանակակից մյուս թերթերի («Մշակ»-ի և այլն) միջև յեղած գաղափարական պոլեմիկան և դրա արտացոլումը Մուրացանի գրվածքներում («Լուսավորության կենտրոն»): Կրոնական գաղափարախոսության ուժեղ ազդեցությունը Մուրացանի վրա (մանավանդ «Անդրեաս Յերեց», «Իմ կաթոլիկ հարսնացուն» և այլն նման մի քանի աշխատությունների մեջ):

Մուրացանի գյուղացիական գրվածքները, ռեալիզմն այս գրվածքների մեջ և նրանց գեղարվեստական արժեքը: Մուրացանի աշխարհայացքի պահպանողական մասը բուրժուական բնույթը:

Մուրացանի գյուղափրկիչ ծրագրի ուսույթի բնույթը:

Մուրացանի պատմական վեպերը («Գեվորգ Մարգալետունի») և մանր բուրժուական ազգայնականությունը նրանց մեջ:

Մուրացանի պատմաֆանտաստիկայի իդեալիզմը: Մուրացանի պատմական վեպերի ուսմանտիկական բնույթը:

Մուրացանի իրրև յերգիծաբան: Մատերան—(բուրժուական ինտելիգենցիայի նկատմամբ) և հումորը (մանր բուրժուազիայի նկատմամբ) Մուրացանի ստեղծագործության մեջ: Նրա յերգիծական պորտրետները՝ Կամսարյան, Սոմճյան և այլն: Մուրացանի լեզուն: Մուրացանի դերը հայ վեպի զարգացման մեջ:

Մուրացանի կրած ազդեցությունները (հատկապես ռուս. նարոդնիկության 2-րդ շրջանի գրականությունից):

Աղբյուրներ.—«Նոյի ագուս», «Առաքյալ», «Լուսավորության կենտրոն»:

15. ԱԳԱՊՅԱՆ

19-րդ դարի վերջին գյուղացիական գրականության աշխուժացումը. դրա հիմնական պատճառը՝ գյուղացիության դժգոհությունը տիրող կապիտալիստական կարգից, ցարիզմի և հո-

դեոքականության ճնշման դեմ բողոքների կուտակումը, վորպիտի պայթեր մոտալուտ հեղափոխության որոք՝ 1905 թվին: Ագապյանի «Մոսինի գանգատը» բնագատում և ցարական դատարանի «արգարագատությունը»:

Ագապյանի ստեղծագործության մեջ արտահայտություն գտած գյուղացիական դեմոկրատիզմի բնույթը. պայքար ցեցերի դեմ՝ Ագապյանի «Գյուղի ճամպան» նովելայում:

Ագապյանի գրվածքների գեղարվեստական արժեքը: Վրճի մեջ գավառաբարբառի ավելի բան ուժեղ առկայություն: Նկարագիրների մեջ չափի զգացմունքի պակասություն, տեղ-տեղ շատախոսություն և բովանդակության ու ձևի անհերգանակություն:

Աղբյուրներ.—Ագապյան—«Մոսինի գանգատը»,

«Պատմվածքներ»:

16. ՎՐԹԱՆԵՍ ՓԱՓԱԶՅԱՆ

Վ. Փափազյանի հասարակական քաղաքական աշխարհայացքը: Գյուղացիական դեմոկրատիայի պաշտպանության միտումն իբրև հիմնական ազդակ:

Փափազյանի աշխարհայացքի զարգացման ուղին 90-ական թվականներից սկսած: Բաֆֆիական վոգով գրած պատմվածքներից դարձ դեպի գյուղացիական դեմոկրատիզմ՝ 1905թ. հեղափոխության նախորդակին. լիբերալ բնագատության վերաբերմունքը Փափազյանի գրական գործունեության այդ յերկու շրջանների նկատմամբ: «Գյուղից» պատմվածքների շարքի և «Ժայռ» դրամայի մեջ արտահայտված ցասումը ցարիզմի և կուլակության դեմ.—(Հարեթ և Գրիգոր աղաների տիպերը): Այդ ցասման սնուցումը: Անգրկովկասյան ագրարային շարժումներ.—պարսկական կյանքից առած վեպերի մեջ (որ. «Ալեմգիր»): Կոլով միապետության և կղերաֆեոդալական մտայնության դեմ: «Ալեմգիր» իբրև դեմոկրատիզմի սիմվոլ—բուստարական յեղանակավորումով:

Վ. Փափազյանը բաղմաժանր և բեղմնավոր գրող.—բանեցրած ժանրերն են՝ նովելա, ժամանակակից և պատմական վեպ, դրամա, նամականի և այլն:

Աշխարհայացքի տատանումներով պայմանավորված և նրա դարձը ուսմանտիրոջից դեպի ուսուցիչ. «Եմման» իբրև ուսուցիչական վեպ-կովկասական ժողովրդական քննադատություն այդ վեպի մեջ: Վ. Փափաղյանի բացասական հայացքները լիբերալիզմի և հոգեվորականության մասին:

1905 թ. հեղափոխության ժամանակ գրած սիմվոլիկ պատմվածքներն իբրև քաղաքական ազդեցության միջոցներ («Վիշապ», «Կորսված արդարություն» և այլն):

Վ. Փափաղյանի կրած ազդեցություններն ինչպիսիք:

Ազդեցություններ. — «Գյուղից», «Մշուշ», «Ալեմգիր», «Փայլեր»:

17. ՆԱՐ-ԴՈՍ

Նար-Դոսն իբրև վիպասան յեվ նովելիստ. նրա կրած ազդեցությունը մասամբ Մուրացյանից և մասամբ Բաքիի սկզբը նախան շրջանի գործերից: Նար-Դոսի ուսուցիչը և նրա տարբերիչ գծերը Շիրվանզադեի ուսուցիչից. Նար-Դոսի վեպերի ժանրային առանձնահատկությունները («Հոգեբանական» ուսման):

Նար-Դոսի վեպերի և պատմվածքների գրական բարձր տեխնիկան: Քաղաքի քայքայվող մասն բուրժուազիայի և նրա ինտելիգենցիայի անկման արտացոլումը Նար-Դոսի ստեղծագործության մեջ: Նար-Դոսի «Որոշակտիվիզմը», Նար-Դոսի քննադատական վերաբերմունքը դեպի հասարակական իր սիրած խավի պակասությունները և բուրժուական հասարակությունը:

Նար-Դոսի վեպերի հերոսների բնութագրերը — հանդիպազրույթյուններ (Աննա Սարոյան, Պատրիկյան, Շահյան, Գարեգին, Սիսակյան և այլն մի կողմից՝ Թուսյան, Զափինյան, Բադենյան, Հեղինե Սոյիկյան և այլն մյուս կողմից). բուրժուական հասարակության մեջ մեղություն դատապարտված՝ «ավերորդ» լինելու գիտակցությունից տանջվող ինտելիգենցիայի պատկերը:

«Նար-Դոսի վեպերի և պատմվածքների գրամատիկական ուժեղ շիշտը, արտահայտված թե բովանդակության մեջ, թե լեզվի մեջ:

Նար-Դոսի կրած ազդեցությունները ուսուցիչական գրականությունից (հատկապես Դատալյանի սկզբը):

Նար-Դոսը և խորհրդային իրականությունը:

Ազդեցություններ. — «Սպանված աղաքի», «Աննա Սարոյան», «Մահը»:

Հակոբ Հակոբյանի կյանքը և գործունեությունը: Նրա հեղափոխական հանրային գործունեությունը և գրական ստեղծագործության ամուր և ներդաշնակ կապը:

Հակոբյանը վորպես հեղափոխական պրոլետարիատի բանաստեղծ:

Պրոլետարական հեղափոխության կռվի անդամարձույթը նրա բանաստեղծության մեջ: Բանվորի հոգեբանության աստիճանական զարգացման արտացոլումը Հակոբյանի յերգերում: Կապիտալիստական գործարանի և շահագործման նկարագրերը («Կարիքի դավաճաններ»):

1905 թ. հեղափոխության գեղարվեստական պատկերացումը Հակոբյանի պոեզիայում: Բանաստեղծի բուն լավատեսությունը («Ջարկենք քանի յերկաթն ե տաք») և նրա հաստատ հավատը դեպի պրոլետարիատի ուժը և նրա վերջնական հաղթանակը («Կարմիր ալիքներ»): Ռեալիստի տարիներին խրախուսում եր բանվորներին («Կապար ե կապիլ յերկինքը», «Վոչինչ, այս ել կանցնի») չեն թարկվելով ուսուցիչի գրականության ազդեցությունը: Բանվորների ջերմ վերաբերմունքն իրենց բանաստեղծին:

Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո նոր բանաստեղծական մոտիվներ Հակոբյանի ստեղծագործության մեջ: Աշխատանքն իբրև պատվո գործ, սոցիալիստական շինարարության տոբյան և նոր գործարանը: Շիրվանալը և Վոլխովստոյը: Հեղափոխության հերոսները վորպես բանաստեղծի «Վառ խոհերի մարմնացում»): «Կարմիր դալիս»:

Հակոբ Հակոբյանի պոեզիայի գեղարվեստական արժեքը հայ ազգային բուրժուական գրականության հանդեպ իր թեմատիկայով և գրական առանձնահատկություններով իբրև հակապոետիկ. լիբերալ քննադատական թշնամական վերաբերմունքը այդ բանաստեղծության հանդեպ:

Հակոբյանն իբրև թարգմանիչ՝ «Աղա Նեգրիի» յերգերի հաջող հայացումը: Հակոբյանը քննադատության առաջ. Ստ. Շահումյանն իբրև պրոլետարական գրականության քննադատ (նրա հոգվածը Մաքսիմ Գորգու մասին) և մասնավորապես նրա հայացքը Հակոբյանի ստեղծագործության բարձր արժեքի մասին:

Ծր. Հայ նոր գրակ. պատմ.—3

Ստեփան Շահումյանի պոլեմիկան մենչևիկյան և դաշնակ-
ցական հասարակական և գրականագիտական հայացքների դեմ—
հակադրվելով թե մեկին և թե մյուսին: Հակոբյանի յերկերի
ժողովածուն անվանում է «Գեղեցիկ և հետաքրքիր ծաղկեփունջ»:
Ա. Ղ. Բ. Ե. Բ. Ե. Բ. — «Բանաստեղծություններ»:

19. ԱՎԵՏԻԲ ԻՍԱՀԱՎՅԱՆ

Իսահակյանը վորպես լիրիկ-բանաստեղծ: Նրա լիրիկայի հիմ-
նական մոտիվները—սեր, գյուղական բնություն և աշխատանք,
բողոք մարդկանց միջև յեղած սոցիալական անհավասարության
դեմ:

Մանր բուրժուազիայի՝ քաղաքի թե գյուղի քայքայման ուժե-
ղացումը Իսահակյանի ստեղծագործության շրջանում և դրա
արտացոլումը Իսահակյանի բանաստեղծությունների մեջ: Իսա-
հակյանի աշխարհայացքը: Իսահակյանի հոռետեսությունը և
անհատապաշտպանությունը, Իսահակյանի հոռետեսության ար-
տացոլումն իր սիրային բանաստեղծությունների մեջ: Իսահակ-
յանի սիրո փոխադրությունը («Հավերժական սեր», «Լիլիթ»
և այլն):

Իսահակյանի հակասությունները: Ռեակցիայի տարիների
ազդեցությունն Իսահակյանի ստեղծագործության վրա (Աբու
Լալա Մահարի): Իսահակյանի ուսմանտեղը: Իսահակյանի լիրի-
կական արժեքները: անմիջականության վառ կոլորիտ. ժող.
բանահյուսության հաջող ոգտագործում:

Վոտանավորի, արվեստի տիրապետում և այլն: Նրա
ստեղծագործության թերությունները՝ չափազանցություններ—
լավահոսություն, թեմաների և մոտիվների հաճախակի կրկնու-
թյուն և այլն:

Իսահակյանի մյուս ժանրի գրվածքները. «Մասնա-Մհեր»
վորպես ժող. եպոսի մշակման փորձ: «Լիլիթ» և այլն պատ-
մելվածքները վորպես փաստորեն արձակ բանաստեղծություններ:

Իսահակյանը և խորհրդային իրականությունը: Իսահակյանի
կատարած դերը հայ գրականության պատմության մեջ—լիրիկա-
կան ժանրի բանաստեղծության զարգացման բնագավառում:
Իսահակյանի կրած ազդեցությունները (Հայն և այլն):

Ա. Ղ. Բ. Ե. Բ. Ե. Բ. — «Բանաստեղծություններ», «Լիլիթ»,
«Մասնա Մհեր»:

20. ՇՈՒՇԱՆԻԿ ԿՈՒՐՂԻՆՅԱՆ

Կուրղինյանի ստեղծագործությունն իբրև արձագանգ 1905
թվի հեղափոխական վերելքի: «Արշալույսի ղողանջները» իր
բուն լավատեսությամբ ուսուցիչայի շրջանի գրականության
մեջ (1907 թ.) իբրև աչքի ընկնող յերևույթ. Հակոբ Հակոբյանի
քնարի ազդեցությունը Կուրղինյանի ստեղծագործության վրա:

Յերկու բանաստեղծների նմանությունները և տարբերու-
թյունները: Հակոբյանի հետևողական և միաձույլ աշխարհայացքը:
Կուրղինյանի աշխարհայացողության մեջ վորոշ անհետևողա-
կանություն: Կովի և ըմբոստացման հետ միասին հարուստների
«Սրտի» և «Խղճի» մասին հիշատակումներ, գլխարկության կո-
չեր: Կուրղինյանի բանաստեղծական արվեստի առանձնահատ-
կությունները, լեզվի կոկոնություն և ճոխություն, լիրիզմի բուն
արտահայտությունը մի քանի բանաստեղծությունների մեջ.
(«Հանգցրեք ջահերը», «Տրտունջ», «Գարուն և», «Արծիվ» և այլն):

Կուրղինյանի սիրային քնարի մեջ ժողովրդական մոտիվ-
ների ոգտագործում: Այդ բաժնում նրա կապը Ավ. Իսահակյանի
ստեղծագործության հետ: Ավետիք Իսահակյանն իբրև Կուրղին-
յանի առաջին քննադատ և նրա մուտքը գրականության մեջ
ջերմորեն վողջունողը:

Կուրղինյանի մի քանի յերգերի վրա Ադա Նեգրիի քնարի
ազդեցությունը («Բանվորները»):

Ա. Ղ. Բ. Ե. Բ. Ե. Բ. — «Արշալույսի ղողանջները»:

21. ՎԱՀԱՆ ՏԵՐՅԱՆ

Տերյանի և Իսահակյանի ստեղծագործության նմանու-
թյունները և տարբերությունները. Տերյանը վորպես լիրիկական
բանաստեղծության հետագա զարգացնող: Նրա բանաստեղծու-
թյունների տաղաչափական բարձր կուլտուրան:

Ռեակցիայի շրջանի ազդեցությունը Տերյանի ստեղծագոր-
ծության վրա: Փախուստ մարդկանցից: Մենություն, մոռացումի
և անհույս տրամադրության մոտիվները նրա վոտանավորներում:

Սիմվոլիզմից կրած ազդեցությունը—մթնշաղի անուրջներ:
Սեր ղեպի անձրևոտ աջուն:

Տերյանի «Նայիրյան» շարքի բանաստեղծություններն իբրև նրա վերջ շրջանում ունեցած ազգայնական տրամադրությունների արտահայտություններ: Տերյանը և հոկեմբերյան հեղափոխությունը: Հեղափոխության թողած ազդեցությունը նրա ստեղծագործության վրա: Տերյանի լեզուն: Տերյանն իբրև հրապարակախոս և քննադատ: Տերյանն իբրև թարգմանիչ: Տերյանի կրած ազդեցությունները ֆրանսիական և ռուսական սիմվոլիզմից:

Աղբյուրն էր.— «Բանաստեղծություններ»:

ԱՐԵՎՄՏԱՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ՊԵՏՐՈՍ ԳՈՒՐՅԱՆ

60-ական թվականներին պոլսահայ աշխատավորական խավերի տնտեսական քայքայումը և նրանց դժգոհությունն աճումը տիրող կարգի դեմ: Նալբանդյանի և Սվաճյանի կապը վորպես ապացույց այդ իրողության: Դուրյանի պոեզիան վորպես անդրադարձումը քաղաքային դեմոկրատիայի ծանր դրության: Դուրյանի բանեցրած գրական ժանրերը— լիրիկական բանաստեղծությունները՝ դրամաներ և նամակներ:

Դուրյանի լիրիկայի թեմաները՝ սոցիալական բողոքի առկայությունը, դժբախտ սեր. ըմբոստացում մահվան դեմ և համակերպում:

Բանաստեղծության մեջ Դուրյանի բերած նորությունները՝ գրական աշխարհաբար լեզուն, վոճի պատկերավորություն, կենդանի սիրո առկայություն, անձնական և հասարակական վողբերգության ցայտուն պատկերացում:

Դրամայի մեջ Դուրյանի առաջ բերած նորությունը՝ կեղծ կլասիցիզմի փոխարեն ռոմանտիզմի և ռեալիզմի տարրեր («Անի քաղաքի ավերումը», «Թատրոն կամ թշվառներ»): Դուրյանի նամակները վորպես յերբեմն արձակ բանաստեղծության նմուշներ:

Դուրյանի ստեղծագործության թերզությունները՝ սկսնակ հեղինակի անվարժություն, գրաբարի մնացորդներ լեզվի մեջ, կրկնողություններ և անմշակություն: Դուրյանի ազդեցությունը հայ հետագա գրողների վրա (Մեծարենց և այլն):

Աղբյուրն էր.— «Բանաստեղծություններ», «Նամակներ»:

2. ՀԱԿՈՐ ՊԱՐՈՆՅԱՆ

Կենսագրական տեղեկություններ (նյութական շարունակական անապահով վիճակը, հալածանքներ կառավարություն և հոգեվորականություն կողմից, նրա թերթերի հաճախակի փակումները և այլն): Պարոնյանը վերադառնալիս հայ աշխատավորության գեմոկրատիայի գաղափարախոս, նրա սատիրան ուղղված ամիրայություն, վաճառականություն, հողերականություն և բուրժուական նացիոնալիստ ինտելիգենցիայի դեմ: Նրա հուժկու մանր բուրժուական խավերի և ինտելիգենցիայի նկատմամբ: Գրիգոր Արծրունու, Նարայի և Վարժապետյանի յերգիծաբանական պորտրետները՝ նրանց գործունեություն հակաօղորդական բնույթի մերկացումը: Պարոնյանի ստեղծագործություն մյուս ժանրերը — յերգիծական — նովելլա և կոմեդիա: Պարոնյանի ռեալիզմը, նրա յերգիծական տիպերը (Արևիկոյի աղա, Բաղդասար աղբար և այլն): Նրա կոմեդիաների հիմնական թեմատիկան, ընտանեկան բարքերի փչացումը և փողի իշխանությունը: Բուրժուական արգարադատության ծայրը: Մոլիերի գրական ժառանգություն քննադատաբար ոգտագործումը: Պարոնյանի յերկերը խորհրդային բեմի վրա: Պարոնյանի քաղաքական ֆելետոնները: Պարոնյանի ստեղծագործության ոգտագործման խնդիրը մեր այսօրվա յերգիծական գրականության մեջ:

Աղբյուրներ. — «Յերկերի ժողովածու», «Աղգային ջուշեր», «Մեծապատիվ մուրացկաններ», «Բաղդասար աղբար»:

3. ՄՐԲՈՒՅԻ ՏՅՈՒՍԱՐ

Կանանց հարցը արևմտահայ հրապարակախոսություն մեջ, այդ հարցի գեղարվեստական պատկերացումը Տյուսարի յերեք վեպերում («Մայա», «Սիրանուշ» և «Վարժուհին»): Տյուսարի իր հայացքներով արձագանգում էր Ստ. Վոսկանյանի և Գ. Արծրունու: Տյուսարի հասարակական գործունեությունը «Հայոսեյաց ընկերություն» մեջ:

Բուրժուական հայ կնոջ ազատագրության խնդիրը Տյուսարի յերկերում: Ժորժ Զանգից կրած գրական ազդեցության խնդիրը: Նրա վեպերի ռոմանտիկական ուղղությունը: Բացասական տիպե-

րի ծայրահեղ չափազանցությունները (Հերիգա, տիկին Արգարյան):

Տյուսարի վոճի հետադարձական բնույթը, Տյուսարի վեպերի շուրջը յեղած դիսկուսիան արևմտահայ քննադատություն մեջ (Ալպոյաճյան, Զոհրապ, Արփիարյան, Պարոնյան):

Աղբյուրներ. — «Մայա»:

4. ԱՐՓԻԱՐ ԱՐՓԻԱՐՅԱՆ

Նովելիստական գրականության մեջ ռեալիզմի սկզբնավորող: (Հանգես յեկավ 90-ական թվականների սկզբում «Կյանքի պատկեր» ժողովածուով): Արփիարյանի կապն Արծրունու հրապարակախոսության հետ: Նրա վեպերի հիմնական թեման՝ բուրժուական կնոջ խնդիրը: Ամուսնության մեջ փողի նշանակությունը և կնոջ հասարակական ստրկության պատկերացումը:

Արփիարյանը կնոջ սոցիալական ազատագրության խնդիր չի դնում, այլ պաշտպանում և կնոջ ձևական իրավական ազատությունը: Արփիարյանի «Կարմիր ժամացույցը» իբրեւ ռաֆֆիական ազգայնական տեղեկանքով հորինված մի վեպակ: Արփիարյանի իբրեւ հրապարակախոս և գրական քննադատ: Արփիարյանի կյանքի վերջում գրած պատմվածքները արհեստավորների կյանքից («Մինչև յերբ» և «Վոսկի ապարանջան»): Արփիարյանի ազդեցությունը արևմտահայ հետագա նովելիստների վրա:

Արփիարյանի յերկերի գեղարվեստական արժանիքները, պատկերավորությունը և վոճի հակիրճությունը:

Աղբյուրներ. — «Նորավեպիկներ»:

5. ԳՐԻԳՈՐ ԶՈՅՐԱՊ

Զոհրապը վերադառնալիս կրթական նովելիստ: Գրականությունը ժողովրդի կյանքի հայելու — նրա սկզբունքի թերը և դեմը: Մի քանի պատմվածքների մեջ այդ սկզբունքի իսկական կիրառումը («Փոստալ», «Այրին», «Թեֆարիկ», «Ճիտին պարտքը»), նրա թեմատիկայի տիրապետող զիծը: Սևուի պորբեմը — աղամարդու և կնոջ փոխհարաբերության հարցը: Այդ պորբեմի լուծումը բուրժուական գաղափարախոսության տեսանկյունով:

Զոհրապի նովելաների գեղարվեստական արժեքը, լեզուն, վոճի պատկերավորութիւնը, գրվածքի հաջող կոմպոզիցիան, բնութիւն հաջող ցուցադրութիւնը, նուրբ հումորը, արձակ բանաստեղծութեան հիշեցնող պատմվածքներ (որ. «Ռեհան», «Կապիկը» և այլն): Ռեալիստական ուղղութեան հաջող գործադրութիւնը «Ժամին բակը» պատմվածքում:

Զոհրապի կրած ազդեցութիւնը Մոպսանից: Զոհրապի թղած ազդեցութիւնը հայ գրականութեան վրա. (Զիֆի Մարտի և իր «Միամտի մը արկածները»):

Աղբյուրներ. — «Կյանքն ինչպես վոր է»:

6. ՏԻԳՐԱՆ ԿԱՄՍԱՐԱԿԱՆ

Կամսարականը վորպես ռեալիստական խոշոր վեպի հորինող. «Վարժապետին աղջիկը» և դրա հասարակական ու գրական արժեքը: Այդ վեպի հիմնական թեման՝ առևտրական դասակարգի ու մանր բուրժուազիայի փոխհարաբերութեան խնդիրը: Վամսականութեան յերկու հակադիր տիպ՝ բացասական (Նահապետյան) և դրական (Արսենյան):

Անդրանիկ Ֆանարձյանի հումորական յերգիծական տիպն իրենով մանր բուրժուազիայի ներկայացուցիչ:

Կանանց հարցի լուծման մեջ բուրժուական մարդասիրութեան սահմաններից դուրս չգալը: «Վարժապետին աղջիկը» վեպի գեղարվեստական արժեքը:

Շիրվանդադեյի դրական կարծիքն այս վեպի մասին: Բուրժուական յերիտասարդութեան ռեալիստական տիպերը՝ Արամը և Թորոս բեյը:

Կամսարականն իրենով լեզվի և հումորի վարպետ: Ապահարդանի և դատավարութեան նկարագրութեան մեջ նրա քննադատական ռեալիզմի աստիճանին բարձրանալը:

Գրականութիւնը. — «Վարժապետին աղջիկը»:



299

63.923

ԳԻՆԸ 50 Կ.

ПРОГРАММА
ПО ИСТОРИИ НОВОЙ АРМЯНСК. ЛИТЕРАТУРЫ

Институт повышения квалификации учителей
Арм. ССР, Ереван, 1938